

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՅ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՄԻ ԿՈՂՄԻՅ, ԵՎ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՅ,  
ՄԻՋԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱՄԱՁԱՅՆԱ-  
ԳՐԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՆԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱ-  
ԲԵՐՅԱԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՆԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 սեպտեմբերի 2013թ.

Նայասպրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի,  
Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,  
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայա-  
ցուցիչ՝ Նայասպրանի Նանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ  
Զ. Մնացականյանի,

համաձայն Նայասպրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-  
վածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» Նայասպրանի Նանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվա-  
ծների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի  
դեկտեմբերի 17-ին Բոյոսելում ստորագրված՝ «Եվրոպական համայնքների և դրանց  
անդամ պետությունների՝ մի կողմից, և Նայասպրանի Նանրապետության՝ մյուս  
կողմից, միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրի՝

Եվրոպական միության ծրագրերին Նայաստանի Նանրապետության մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ Եվրոպական միության և Նայաստանի Նանրապետության միջև շրջանակային համաձայնագրի մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հեղափոխելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրոպական համայնքների և դրանց անդամ պետությունների՝ մի կողմից, և Նայաստանի Նանրապետության՝ մյուս կողմից, միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրի՝ Եվրոպական միության ծրագրերին Նայաստանի Նանրապետության մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ Եվրոպական միության և Նայաստանի Նանրապետության միջև Շրջանակային համաձայնագրի մասին» արձանագրությունն ստորագրվել է 2012թ. դեկտեմբերի 17-ին՝ Բրյուսելում:

Արձանագրությամբ Նայաստանի Նանրապետությանը հնարավորություն է ընձեռվում մասնակցելու Եվրոպական միության այն բոլոր ընթացիկ և հետագա ծրագրերին, որոնք բաց են Նայաստանի Նանրապետության մասնակցության համար՝ համաձայն այդ ծրագրերի հաստատման վերաբերյալ համապատասխան դրույթների:

2. Արձանագրության համաձայն Նայաստանի Նանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

ա) կատարել ֆինանսական ներդրում Եվրոպական միության ընդհանուր բյուջեում՝ այն կոնկրետ ծրագրերին համապատասխան, որոնց մասնակցում է,

բ) սահմանել Եվրոպական հանձնաժողովի և Նայաստանի Նանրապետության իրավասու մարմինների միջև Փոխըմբռնման հուշագրում (հեղափոխում կնքվելիք) յուրաքանչյուր կոնկրետ ծրագրին Նայաստանի մասնակցությանն առնչվող հարուկ դրույթներն ու պայմանները, մասնավորապես՝ վճարման ենթակա ֆինանսական ներդրումը և հաշվեկրթությունների ու գնահատման ընթացակարգերը՝ հիմք ընդունելով սույն ծրագրերի կողմից հաստատված չափանիշները:

3. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով կողմերի՝ միմյանց ծանուցելու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Նայասպանի Նանրապետության սրանձնած պարտավորությունները բխում են ՆՏ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2012 թվականի դեկտեմբերի 17-ին Բրյուսելում ստորագրված՝ «Եվրոպական համայնքների եւ դրանց անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Նայասպանի Նանրապետության՝ մյուս կողմից, միջեւ Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի՝ Եվրոպական միության ծրագրերին Նայասպանի Նանրապետության մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ Եվրոպական միության եւ Նայասպանի Նանրապետության միջեւ շրջանակային համաձայնագրի մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**